ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**. Հասմիկ Ստեփանյան, ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության գործառնական բաժնի գլխավոր մասնագետ
2. **Գործուղման վայրը և ժամկետները**. Ղազախստանի Հանրապետություն, ք. Ալմաթի, 2025թ. հունվարի 20-23-ը:
3. **Հրավիրող կողմը.** Արժույթի Միջազգային Հիմնադրամի և Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն:
4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).** Մասնակցություն «Համախմբված կառավարության ֆինանսական վիճակագրության կազմում / Compilation of Consolidated GFS» թեմայով տարածաշրջանային աշխատաժողովին: Գործուղման նպատակն էր Արժույթի Միջազգային Հիմնադրամի և Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոնի կողմից ներկայացվող պետական ֆինանսների վիճակագրության համախմբման նորություններին, մանրամասնություններին ծանոթանալը:

5. **Քննարկված թեմաները.**

- ✓ GFS-ի սահմանումներ և սկզբունքների ներկայացում
- ✓ Կրկնակի հաշվառման սկզբունքները GFS-ում
- ✓ Արժույթի Միջազգային Հիմնադրամի և Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոնի GFS և PSDS աշխատանքների վերջին զարգացումներ
- ✓ Գծից վերև / գծից ներքև գործարքներ – տեսություն և հաշվարկներ
- ✓ GFS-ի համախմբման գործառնությունները կառավարության հատուկ գործառնությունների հետ կապված
- ✓ Համախմբման ներածություն – տեսություն
- ✓ Համախմբման ենթակա ինստիտուցիոնալ միավորներ – տեսական նախադրյալներ
- ✓ Հարավային Ասիայի երկրների փորձը GFS-ի համախմբում ոլորտում

- ✓ GFS-ի կազմման և տարածման գործընթացների փաստաթղթավորում
- ✓ GFS-ի կազմման և տարածման փաստաթղթավորման միջազգային փորձ

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացին ներկա են գտնվել տարածաշրջանի 7 երկրների 18 մասնակիցներ: Դասընթացի ընթացքում ԱՄՀ-ի և Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային զարգացման կենտրոնի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դասախոսություններ, որոնք իրականացվել են հարցուպատասխանի, տեխնիկական վարժություններ կատարելու ռեժիմով: Դասախոսություններից հետո, ներկայացված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ: Մասնակիցները բաժանվել են 3 խմբերի, որոնց առաջադրվել են պետական ֆինանսների վիճակագրության համախմբման տարբեր վարժություններ: Խմբային աշխատանքի արդյունքում յուրաքանչյուր խմբի կողմից ներկայացվել են առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ և կազմակերպվել են քննարկումներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի շրջանակներում կարևորվեցին պետական ֆինանսների վիճակագրության պատասխանատուների հստակ շրջանակի սահմանելը, համապատասխան ինֆորմացիայի փոխանցելիության անհրաժեշտությունը, որը հնարավերություն կտա բարձրացնել վիճակագրության որակը: Սեմինարի ընթացքում մեծ նշանակություն տրվեց պետական ֆինանսների վիճակագրության փաստաթղթավորման գործընթացի կազմակերպմանը, որը հնարավորություն կտա ունենալու հստակ դերակատարներ, փաստաթղթի ձևանմուշներ, գործընթացների

հստակ նկարագրություն, որն էլ իր հերթին կլուծի կադրերի հոսունության կետ կապված խնդիրները:

Վիճակագրության որակը բարձրացնելու համար առաջարկում եմ կատարել քայլերի հետևյալ հաջորդականությունը.

- սահմանել պատասխանատուների հստակ շրջանակ (վարչության մակարդակով)
- կազմել և հրապարակել մեթոդական ուղեցույցներ
- սահմանել շահագրգիռ մարմինների հետ տեղեկատվության փոխանակման ձևանմուշներ և ժամանակացույց:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Հասմիկ Ստեփանյան

29.01.2025թ